

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ



ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ



*Մարզկենտրոնը՝ ք. Արտաշատ
Տարածաշրջանները՝ Արարատ, Արտաշատ և Մասիս
Քաղաքները՝ Արտաշատ, Արարատ, Վեդի և Մասիս*

ՀՀ Արարատի մարզը գտնվում է հանրապետության հարավ-արևմտյան մասում:

Մարզը հյուսիսից *սահմանակից է մայրաքաղաքին*, ՀՀ Արմավիրի և Կոտայքի մարզերին, արևելքից՝ ՀՀ Գեղարքունիքի մարզին, հարավ-արևմուտքից՝ ՀՀ Վայոց ձորի մարզին և հարավից *պետական սահմանով* սահմանակից է Թուրքիային:

Տարածքը	2096 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.0 %
Քաղաքային համայնքներ	4
Գյուղական համայնքներ	93
Քաղաքներ	4
Գյուղեր	94
Բնակչության թվաքանակը 2007թ. հունվարի 1-ի դրությամբ	275.1 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	81.0 հազ. մարդ
գյուղական	194.1 հազ. մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	29.4 %
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2006թ.	8.5 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2006թ. հուլիսի 1-ի դրությամբ)	157800 հա
այդ թվում՝ վարելահողեր	27400 հա

Մարզի տարածքում է գտնվում **Խոսրովի պետական արգելոցը** (ծովի մակերևույթից 1600-2300 մ բարձրության վրա):

«**Արարատի մարզը** հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է:

Մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Երասխ-Ղարաբաղ ավտոմայրուղին, և Երևան-Երասխ- երկաթուղին:

2006թ.-ին **մարզի տնտեսության** հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 8.4 %,
- գյուղատնտեսություն՝ 13.0 %,
- շինարարություն՝ 0.6 %,
- առևտուր և ծառայություններ՝ 2.6 %:

Տնտեսության հիմքը **գյուղատնտեսությունն** է: Այն հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ:

Բեռնատրևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ **արդյունաբերության** հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ երեք ճյուղերը.

- ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ակոհոլային խմիչքների արտադրություն),
- բ) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա),
- գ) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ասբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը		
	2004	2005	2006
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	644	692	777
<i>այդ թվում՝</i>			
խանութներ	360	408	522
կրպակներ	191	217	187
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	3	3	3
սպառողական ապրանքների շուկաներ	4	4	4
առևտրի այլ օբյեկտներ	86	60	61

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը		
	2004	2005	2006
Հաստատություններ, ընդամենը	198	206	213
<i>որոնցից՝</i>			
նախադպրոցական պետական	59	65	72
հանրակրթական պետական դպրոցներ	112	114	112
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	20	20	22
պետական միջին մասնագիտական ուսումնական	4	4	4
ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	2	2	2
ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1

Արտաշատ քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 25.2 հազ. բնակիչ) մարզկենտրոնն է: Քաղաքը գտնվում է Երևանից 29 կմ հեռավորության վրա (հայոց պատմական մայրաքաղաք Արտաշատից 10 կմ հյուսիս-արևմուտք), զբաղեցնում է 800 հա տարածություն:

Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների, ալյուրի արտադրություն), ինչպես նաև ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրությունը (ճենապակուց և հախճապակուց տնտեսական-կենցաղային իրերի, բնական քարերից երեսապատման նյութերի արտադրությունը):

Քաղաքի **տնտեսական** կյանքում էական դեր ունի նաև **գյուղատնտեսությունը**, որի հիմնական ուղղությունը **դաշտավարությունն** է:

Արարատ քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 20.6 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 48 կմ հեռավորության վրա, հիմնադրվել է 1936թ.: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որի մեջ իր գերակշիռ տեղն ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ցեմենտի, կրի և ասբոցեմենտային իրերի արտադրությունը):

Վեդի քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 13.3 հազ.բնակիչ) գտնվում է Վեդի գետի աջ ափին, Երևանից 35 կմ հեռավորության վրա: Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որում կարևոր տեղ է զբաղեցնում բնական քարերից երեսապատման նյութերի, էլեկտրական և հսկիչ սարքերի ու սարքավորումների, պլաստմասաներից պատրաստվող շինարարական իրերի արտադրությունը:

Քաղաքի **տնտեսական** կյանքում էական դեր ունի նաև **գյուղատնտեսությունը**, որի հիմնական ուղղությունը **դաշտավարությունն** է:

Մասիս քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 21.9 հազ. բնակիչ) գտնվում է Հրազդան գետի ձախ ափին, Երևանից 14 կմ հեռավորության վրա: Խոշոր երկաթուղային ապրանքային կայան է, որն ունի միջմարզային նշանակություն և սպասարկում է Երևան քաղաքին:

Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում փայտանյութի և փայտե իրերի արտադրությունը (փայտաստրոցման և ռանդման արտադրություն, հատակի ոչ հավաքածու փայտե ծածկերի, այդ թվում՝ չհամալրված մանրատախտակի արտադրություն), քիմիական նյութերի և քիմիական արտադրանքի արտադրությունը (ներկերի, լաքերի, մանաստիպ նյութերի, տպագրական ներկերի և հատակի մածուկի արտադրություն) և ծխախոտի ապրանքների արտադրությունը (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա):

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
Արտաշատ	ք. Արտաշատ
Արարատ	ք. Արարատ
Մասիս	ք. Մասիս
Վեդի	ք. Վեդի

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1	Աբովյան
2	Ազատաշեն
3	Ազատավան
4	Այգավան
5	Այգեգարդ
6	Այգեպատ
7	Այգեստան
8	Այնթափ
9	Ավշար
10	Արալեզ
11	Արարատ
12	Արաքսավան
13	Արբաթ
14	Արզավանդ
15	Արմաշ
16	Արևաբույր
17	Արևշատ
18	Բաղրամյան
19	Բարձրաշեն
	• Բարձրաշեն
	• Կաքավաբերդ
20	Բերդիկ
21	Բերքանուշ
22	Բյուրավան
23	Բուրաստան
24	Գեղանիստ
25	Գետազատ
26	Գետափնյա
27	Գինեվետ (նախկինում՝ Վեդու գինու գործարան)
28	Գոռավան
29	Դալար
30	Դաշտավան
31	Դաշտաքար
32	Դարակերտ
33	Դարբնիկ
34	Դեղձուտ
35	Դիմիտրով
36	Դիտակ
37	Դվին
38	Եղեգնավան
39	Երասխ
40	Չանգակատուն
41	Չորակ
42	Լանջազատ

Համայնքի անվանումը		Բնակավայրի անվանումը
43	Լանջանիստ	
44	Լանջառ	
45	Լուսաշող	
46	Լուսառատ	
47	Խաչիառ	
48	Կանաչուտ	
49	Հայանիստ	
50	Հնաբերդ	
51	Հովտաշատ	
52	Հովտաշեն	
53	Դուկասավան	
54	Մասիս	
55	Մարմարաշեն	
56	Մխչյան	
57	Մրգանուշ	
58	Մրգավան	
59	Մրգավետ	
60	Նարեկ	
61	Նիզամի	
62	Նշավան	
63	Նոյակերտ	
64	Նորաբաց	
65	Նորամարգ	
66	Նորաշեն	
67	Նոր Խարբերդ	
68	Նոր կյանք	
69	Նոր Կյուրին	
70	Նոր ուղի	
71	Շահումյան	
72	Շաղափ	
73	Ոսկետափ	
74	Ոստան	
75	Պարույր Սևակ	
76	Ջրահովիտ	
77	Ջրաշեն	
78	Ռանչպար	
79	Սայաթ –Նովա	
80	Սիս	
81	Սիսավան	
82	Սիփանիկ	
83	Սուրենավան	
84	Վանաշեն	
85	Վարդաշատ	
86	Վարդաշեն	
87	Վերին Արտաշատ	
88	Վերին Դվին	
89	Տափերական	
90	Ուրցալանջ	
91	Ուրցաձոր	
92	Փոքր Վեդի	
93	Քաղցրաշեն	

